



Ծնվել է 1923 թվականին Շամշադինի շրջանի Մովսես գյուղում: 1942 թվականին՝ 19 տարեկան հասկում, նա կամավոր մեկնել է ռազմաճակատ: Ծառայել է № 133 հրթիռահրետանային գումարտակում, որպես գնդացրորդ: Զենքը ձեռքին հասել է Ճապոնիա: Կատարած բազում սխրագործությունների համար պարգևատրվել է պատվո շքանշաններով՝ «Գերմանիայի դեմ տարած հաղթանակի», «Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի», «Արիության համար»: Պատերազմի ավարտից յոթ ամիս անց վերադարձել է տուն՝ փառք ու պատիվ բերելով հայրենի օջախին, համազյուղացիներին և իր ժողովրդին: